

**2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ,
ՋՈՆ ՄՅՈՒՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ**

ԾՆՈՂԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. Նպատակը

Ջոն Մյուր դպրոցի անձնակազմը միտված է յուրաքանչյուր երեխայի որակյալ և չափանիշների վրա հիմնված կրթությունն ապահովելու նպատակին: Այդ նպատակով մենք կշարունակենք համագործակցություն հաստատել ծնողների և համայնքի հետ ավելի մեծ ներգրավվածություն և մասնակցություն խրախուսելու և բոլոր երեխաների ձեռքբերումներին խթան հանդիսանալու համար: Ծնողների աջակցությունն իրենց երեխաներին և դպրոցին կարևոր նշանակություն ունի երեխաների հաջողության հարցում: Բոլոր առարկաների դասարանի մակարդակի չափորոշիչները հասանելի են առցանց՝ <http://www.cde.ca.gov/re/cc> կամ կտրամադրվեն բոլոր ծնողներին տարվա սկզբին ըստ պահանջի՝ ակնկալիքով, որ բոլոր աշակերտները կաշխատեն այդ չափանիշներին համապատասխանելու համար: Այս չափանիշները բացատրվել և քննարկվել են «Դպրոցի վերամուտի երեկոյին» տարվա սկզբին: Ջոն Մյուր տարրական դպրոցը խրախուսում և հնարավորություն է տալիս բոլոր ծնողներին մասնակցել դպրոցի ծրագրի բոլոր ասպեկտներին՝ համաձայն օրենսդրության (PL 100-297), Բաժին 1118. Ծնողների ներգրավման և կրթաշրջանի քաղաքականությանը համապատասխան:

II. Ծնողների ներգրավվածությունը և մասնակցությունը քաղաքականության մշակման գործին

Ջոն Մյուր դպրոցի ծնողի և ընտանիքի ներգրավվածության քաղաքականությունը վերանայվել է հանձնախմբի կողմից, կազմված 3 ծնողից, 3 ուսուցից, մասնագետ ուսուցից և տնօրենից՝ ուսուցիչ/ծնող/աշակերտ պայմանագրի (եռակողմ) համաձայն: Ծնողների առաջարկներ են ստացվել նաև ծնողների հարցումների միջոցով, որոնք իրականացվել են որպես դպրոցական Title I նախագծային ծրագրի մշակման համար, որպես մեր կարիքների գնահատման գործընթացի մաս: Ամեն տարի Ուսուցիչ/ծնող/աշակերտ պայմանագրի նախագիծը ներկայացվում է դպրոցական խորհրդին՝ դպրոցական խորհրդի նիստերի և Դպրոցի ծրագրի նստաշրջանների ընթացքում քննարկելու և հաստատման համար: Ծնողի և ընտանիքի ներգրավվածության քաղաքականությունը տարեկան վերանայվում է SSC-ի անդամների կողմից, քննարկվում և թարմացվում ըստ անհրաժեշտության: Վերջին վերանայումը տեղի է ունեցել 2019 թվականի օգոստոսին:

III. Տարեկան ժողով Ջոն Մյուր դպրոցի ծնողների համար

Դպրոցական խորհրդի նիստի հետ համատեղ անցկացվող տարեկան ծնողական ժողովներում ծնողներին տեղեկացվում են դպրոցական ծրագրի բոլոր հայեցակետերի, այդ թվում դրա նախագծի իրականացման ու գնահատման մասին: Ուսումնական տարվա սկզբին ծնողները ստանում են ընթացիկ Ուսուցիչ/ծնող/աշակերտ պայմանագրի պատճենը և կրթաշրջանի և Դպրոցական խորհրդի ժողովներում տեղեկանում են նորություններին: Տրամադրվում են իսպաներեն և հայերեն բանավոր թարգմանության ծառայություններ, ինչպես նաև փաստաթղթերի գրավոր թարգմանություններ: Դպրոցի բոլոր ծնողներին ուղարկվում են գրավոր ծանուցումներ (անգլերեն, իսպաներեն և հայերեն) ժողովների և համադպրոցական միջոցառումների ու գործունեության մասին: Դպրոցի առջևի յուսատախտակը և Ջոն Մյուր դպրոցի կայքէջը www.johnmuirelementary.net, նույնպես տեղեկացնում են ծնողական ժողովների, միջոցառումների և դպրոցի սոցիալական ցանցերի հարթակների մասին:

IV. Ուսուցիչ/Ծնող/Աշակերտ պայմանագիր

Coordinated Compliance Review կանոնակարգերի համաձայն, յուրաքանչյուր դպրոց պետք է ծնողներին ներկայացնի աշակերտների առաջադիմության բարելավման համար պատասխանատվությունը, թե ինչպես դպրոցն ու ծնողները կառուցեն և զարգացնեն համագործակցություն, որ օգնեն երեխաներին համապատասխանել նահանգային բարձր չափանիշներին: Վերը նշված Դպրոցական խորհրդի անդամ ծնողները մասնակցում են այս պայմանագրի նախագծմանը, որը (1) նկարագրում է խրախուսիչ

միջավայրում ուսումնական որոկյալ ծրագիր և դասավանդում տրամադրելու դպրոցի հանձնառությունը, (2) նկարագրում է ծնողների պատասխանատվությունը և ծնողների ու ուսուցիչների շարունակական հաղորդակցության կարևորությունը, և (3) նկարագրում է աշակերտների պատասխանատվությունը սեփական ուսումնառության համար: Այս պայմանագիրը կոչվում է Ուսուցչի /ծնողի/աշակերտի պայմանագիր: Այն բացատրվում և քննարկվում է Դպրոցի վերամուտի երեկոյի (Back to School Night) ժամանակ ուսումնական տարվա առաջին ամսվա ընթացքում, տարածվում և ստորագրվում է ծնողների, աշակերտների և ուսուցիչների կողմից: Պայմանագիրը տուն է ուղարկվում այն ծնողներին, ովքեր չեն մասնակցել Դպրոցի վերամուտի երեկոյին: Յուրաքանչյուր երեխայի ստորագրված պայմանագրի մի պատճենը պահվում է դպրոցում, մյուսը՝ տանը: Ուսուցչի/ծնողի/աշակերտի պայմանագիրը վերջին անգամ բարեփոխումների է ենթարկվել է 2021 թ. մայիսին:

V. Ծնողների ներգրավման տարբերակներ

Ծնողներից ակնկալվում է բազմաթիվ միջոցներով ներգրավվել իրենց երեխաների կրթության մեջ՝ տանը, դպրոցում և համայնքում: Ծնողներին իրենց պարտականությունները կատարելու մեջ աջակցելու նպատակով, մենք Ջոն Սյուր դպրոցում կօգնենք ծնողներին զարգացնել ծնողական հմտություններ և տանը ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն երեխաների սովորելու ջանքերին: Մենք ծնողներին կսովորեցնենք հմտություններ, որոնք կօգնեն աջակցել երեխաներին տանը դասեր սովորելու հարցում և մատչելի ու համակարգված կղարձենն երեխաների և ընտանիքների համար գործող համայնքային և օժանդակ ծառայությունները: Մենք խթանելու ենք հստակ և երկկողմանի հաղորդակցություն դպրոցի և ընտանիքի միջև դպրոցական ծրագրերի և երեխաների առաջընթացի վերաբերյալ: Մենք ամեն ինչ կանենք, որ ներգրավենք ծնողներին, առաջարկենք համապատասխան դասընթացներ, օգնենք դպրոցում ուսուցողական և օժանդակող դերերում, ինչպես նաև աջակցենք ծնողներին, որպես որոշում կայացնողներ և զարգացնենք նրանց ղեկավարելու, կառավարելու, խորհրդատվական և շահերի պաշտպանության դերերը:

Ջոն Սյուր դպրոցում ծնողների մասնակցության և ներգրավման ընթացիկ հնարավորություններն են.

- Տարեսկզբի ծնողների ծանոթության ժողովները
- Ջոն Սյուրի Դպրոցական խորհուրդը
- Դպրոցի Title 1 ծրագրի ժողովը
- Ջոն Սյուրի Անգլերենի խորհրդատվական հանձնախումբը
- Կրթաշրջանի Ծարունակական ուսման և հանախումբների ծրագրի (LCAP) ժողովները
- Peachjar տեղեկատու
- Կրթաշրջանի Համաշխարհային լեզվի խորհրդատվական հանձնախումբի ժողովները
- Կրթաշրջանի Անգլերենի խորհրդատվական հանձնախումբը
- Կրթաշրջանի Ծնորհայինների և տաղանդավորների ուսուցման (GATE) ժողովները
- Ծնողական կրթության դասընթացները
- Ծնողական ժողովները
- Հինգշաբթի օրվա թղթապանակի միջոցով ծնողի հետ հաղորդակցությունը՝ իսպաներեն և հայերեն թարգմանությամբ
- Դասարանների ներսում կամավոր օգնող ծնողներ. դիմումներն ու տեղեկությունները կարող եք ստանալ գրասենյակից
- Ծնողական խորհրդի (PTA) ժողովներն ու միջոցառումները
- Սյուր դպրոցի հիմնադրամի ժողովները
- Տեղեկատվական ժողովները ծնողների համար
- Կամավոր աշխատանքի հնարավորություններ դպրոցի միջոցառումների ժամանակ

VI. Ծրագրերի համապատասխանեցումը մեր համայնքի կարիքներին

Ամեն տարի անց են կացվում ծնողների և երեխաների հարցումներ, և համադպրոցական ծրագիրը կազմվում է բացահատված կարիքները բավարարելու նպատակով: Ծնողները ծանուցվում են սեմինարների և այլ ծրագրերի մասին, իսկ մասնակցելու պատասխանատվության կարևորությունն ընդգծվում է տեղեկատուների, հաղորդագրությունների, կայքէջի, հեռախոսազանգերի, սոցիալական ցանցերի դպրոցական հարթակների և Դպրոցական խորհրդի ժողովների միջոցով:

VII. Անձնակազմ-Ծնող հաղորդակցություն

Ծնողների հետ շփումը ներառում է շաբաթական հինգշաբթի թղթապանակներում ուղարկվող ծանուցագրերը, ծնողների տեղեկագիրքը, դպրոցի առջևի լուսատախտակի հաղորդագրությունները, հեռախոսազանգերի ավտոմատ համակարգը (գրատախտակ), Մյուրի կայքէջը, սոցիալական ցանցերում դպրոցական հարթակները, Peachjar տեղեկատուն, ոչ պաշտոնական նամակները, հեռախոսային խոսակցությունները և տնային այցելությունները: Բոլոր հաղորդագրություններն ուղարկվում են անգլերենով, հայերենով և իսպաներենով:

VIII. Գնահատում

Դպրոցական խորհուրդը կներգրավվի դպրոցների վերանայման և կատարելագործման գործընթացում և կքննարկի ծնողների մասնակցության և ներգրավվածության ծավալը և թե ինչպես կարող են ծնողները շարունակել ընդգրկվել: Ծրագրերը կհանվեն, կվերանայվեն կամ կատեղծվեն ըստ անհրաժեշտության՝ շարունակելու մեր հանձնառությունը՝ ինչն է նպաստել ծնողների ներգրավմանը մեր աշակերտների կրթության բոլոր ասպեկտներում:

Ջոն Մյուր տարրական դպրոցը հակված է ծնողների մասնակցությանն ու ներգրավմանը: Ծնողների և ընտանիքի ներգրավվածության քաղաքականությունը կհամակարգվի կատեգորիկ մասնագետ ուսուցչի, դպրոցի տնօրենի և Դպրոցական խորհրդի անդամների կողմից և կշարունակի խթանվել դպրոցի ողջ անձնակազմի կողմից:

Վերանայվել է՝ 2021թ. մայիսին